# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԱՆԻԿՈ ՖԱՐՄ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 12.02.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «05» Մարտի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Լևոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 12.02.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացույցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացույցային օրվա ընթացքում:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ | «Անիկո ֆարմ» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Գյումրի, Մազմանյան 3բ | ք. Երևան Արարատյան 90/8 |
| ՀՎՀՀ 05500411 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | ՀՀ 1570018156020100 |
| ՀՀ 1570078724667200 | ՀՎՀՀ 01840918 |
| Տնօրեն՝ Սահակ Հակոբյան | Տնօրեն՝ Արմեն Լևոնյան |
| ----------------------------------- (ստորագրություն) Կ.Տ | ----------------------------------- (ստորագրություն) Կ.Տ |